ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

07 մարտի 2013 թվական N 2

ԴԵՂՁՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2013-2016ԹԹ- ՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով ավագանին որոշում է՝

Հաստատել ,,Դեղձուտ համայնքի 2013-2016թթ-ների սոցիալ-տնտեսական զարգացման քառամյա ծրագիրը,, հետևյալ տեսքով՝

ԴԵՂՁՈՒՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2013 -2016թթ
ՍՈՑԻԱԼ – ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

1.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔՐ. ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Դեղձուտ գյուղը հիմնադրվել է 1920թ-ին: Այն գտնվում է Արարատյան դաշտավայրում, ծովի մակերևույթից մոտավորապես 800մ բարձրության վրա: Դեղձուտ գյուղի առաջին վերաբնակիչներն եկել են Արևմտյան Հայաստանի Մշո դաշտավայրից: Լինելով հմուտ հողագործներ և արհեստավորներ, լավ իմանալով հողի գաղտնիքները և բնության կողմից պարգևատրված լինելով Առատ ոռոգման ջրով, կարճ ժամանակում Դեղձուտ գյուղը դարձավ Արարատ-

յան դաշտավայրի մրգի ու պտղի առատ շտեմարան: Դեղձուտ գյուղը ներկայումս սահմանակից է Կանաչուտ, Գետազատ և Մրգանուշ գյուղերին:Դեղձուտ գյուղը տեղադրված է Ազատ գետի ձախ ափին:Գյուղը խմելու ջուրը ստանում է Գառնու սառնորակ աղբյուրներից:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղում ապրում են 1129 բնակիչներ , որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 48.8 տոկոսը: Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է:

11. Երեխաներ /0 – 5տ/	76
12. դպրոցականներ /6 -17տ/	245
13. 18 – 65տ	674
14. թոշակառուներ	120
15. հաշմանդամներ	13
16. աշխատունակներ	565
17. փախստականներ	92
18. ընտանիքների թիվը /թխեր/	268
19. ,,փարոս,, համակարգում գրանցվածներ	35
20. գրանցված ընտրողների թիվը	786

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից որն ընտրվում է 4 տարին մեկ անգամ:Գյուղապետարանի աշխատակազմը հետևյալն է՝

10. աշխատակազմի քարտուղար	1 դրույք
11. համայնքի ղեկավարի տեղակալ	1 դրույք
12. գլխավոր մասնագետ	1 դրույք
13. առաջատար մասնագետ	1 դրույք
14. մշակույթի տան տնօրեն	1 դրույք
15. գրադարանավար	1 դրույք
16. օպերատոր	1դրույք
17. պանակ	1 դրույք
18. հավաքարար	1 դրույք

Գյուղապետարանի աշխատակազմը բաղկացած է 10 հոգուց:
Ավագանին բաղկացած է 7 անդամներից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

Համայնքի սեփականության գույքի ցանկը

Մշակույթի տուն 1

Գրադարան -
Բուժ. կետ -
Ներհամայնքային նշանակության ճանապարհներ և փողոցներ
Գերեզմանատուն
Տնտեսական անկման պատճառով, համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է: Խմելու ջրի ներհամայնքային ցանցը կառուցվել է 1958թ-ին, 1կմ հատվածի ջրագիծը փոխվել է 2008թ-ին: Սակայն ջրի մաշվածությունն այնքան մեծ է, որ ջրի կորուստը հասնում է 40 տոկոսի: Անձրևաջրերն ու կեղտաջրերը հաճախ ներթափանցում են խմելու ջրի ցանց, որն էլ վտանգավոր է դարձնում ջրի օգտագործումը:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Համայնքում կա 202 առանձնատուն 35,300քմ տարածքով: Բնակարանով անապահով և կարիքավոր ընտանիքների թիվը 60-ից ավել է, որը տարեցտարի աճում է: Կան բազմաթիվ կիսավթարային շենքեր, որոնք տնտեսական ճգնաժամի պատճառով չեն վերանորոգվում:

ՀՈՂԱԱՐԱԾՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

Համայնքի վարչական տարածքը	- 208.79հա
Գյուղատնտեսական նշան. հողեր	- 151.23հա
Բնակավայրերի հողեր	- 49,1
Քաղաքացիների սեփականության -0, հողեր	-157.89
Այդ թվում՝ գյուղատնտ. Նշան. հողեր	-112.58
Տնամերձ	-41,9
Համայնքի սեփական գյուղ նշան. հողեր	-38.65
Այդ թվում՝ վարելահող	- 0.07
Այլ հողեր	- 38.58
Մեկ հողաբաժնի չափը	0.30հա

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Համայնքը հիմնականում զբաղվում էխաղողագործությամբ,պտղաբուծությամբ կարտոֆիլի , կաղամբի և այլ բանջար- բոստանային կուլտուրաների արտադրությամբ: Ոռոգման ջրի պակաս գյուղը համարյա չի զգում: Սակայն ոռոգման ցանցի բարելավումից հետո այն ավելի կկարգավորվի: Գյուղն ունի գյուղատնտեսական արտադրանքի իրացման խնդիր, քանզի ստացված բերքը չի կարողանում հասցնել շուկա:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղն ունի 1 միջնակարգ դպրոց, որը վերջին տարիներին չի վերանորոգվել,

վատ, կարելի է ասել անմխիթար վիճակում է:Այնտեղ սովորում է 119 աշակերտ: Դպրոցն ունի 34 աշխատատեղ, մեկ ուսուցչին ընկնում է 6 աշակերտ: ՈՒնի 20 ուսուցիչ: Դպրոցի տանիքի, լուսամուտների վերանորոգումը կատարվել է 2012թ-ին:Հարկավոր է փոխել դռները , իրականացնել ներքին հարդարում, անցկացնել ջեռուցում, կառուցել սանհանգույց, վերանորոգել խմելու ջրի ցանցը,անցկացնել կոյուղի:

ՄՇԱԿՈՒՅԹ, ՍՊՈՐՏ, ՀՈԳԵՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Համայնքն ունի 1 մշակութի տուն,որի տանիքը, դահլիճն իր կից սենյակներով վերանորագման կարիք ունեն: Չունենք անհրաժեշտ քանակությամբ աթոռներ, որի պատճառով համայնքը զրկվել է հասարակական միջոցառումներից, կինոյից, թատրոնից; Գյուղում գործում են կարատեյի պարի խմբակներ: Գործող գրադարանն ունի 5400 անուն գիրք, որը տեղավորված է մշակույթի տանը և գրքերի պահպանման պայմանները չեն համապատասխանում նորմայի պահանջներին: Գյուղապետարանի աշխատակազմը ամբողջությամբ վարչական շենք չունենալու պատճառով տեղավորվել է մշակույթի տանը, որը շատ անհարմար է:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է1 բուժ.կետ, որը վերանորոգվել է 2010թ-ին՝ փոխվել է տանիքը, իրականացվել է ներքին հարդարում, անցկացվել է ջրագիծ: Այն ունի մեկ աշխատող՝ բուժքույր: Բուժ.կետը զրկված է անհրաժեշտ սարքավորումներից , գույքից, առաջին օգնության համար անհրաժեշտ իրերից և դեղամիջոցներից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ

Համայնքն ունի ավելի քան բուհի 600 շրջանավարտ, տարբեր մասնագիտությունների, որոնք կարողանում են կազմակերպել կրթության ու դաստիարակության, մշակութային, շինարարական աշխատանքները:
Գյուղը գազաֆիկացված է մասնակի:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

- Ճանապարհների, խմելու ջրի և ոռոգման ցանցի անմխիթար վիճակը:
- Ծնելիության նվազում կապված տնտեսական վիճակի վատթարացման հետ:
- Մեծանում է արտագնա աշխատանքի մեկնողների թիվը:
- Ավելանում է գործազրկության թիվը:
- Ստացված գյուղ. մթերքները իրացնելու հետ կապված խնդիրներ ունի:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՎՏԱՆԳՆԵՐԸ

Խմելու ջրի ներհամայնքային ցանցի անհետաձգելի վերանորոգման անհրաժեշտությունը /կեղտաջրերի ներթափանցումը խմելու ջրի ցանց կարող է դառնալ վարակիչ հիվանդությունների աղբյուր/:
Հարկերի և վարձավճարների գանձման դժվարությունները, մեծ վտանգ են սպառնում համայնքի բյուջեի կատարմանը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Բարեփոխումներ անցկացնելու ճանապարհով հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ –տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, գյուղը դարձնել գեղեցիկ, բարեկարգ և ամենաբարեկեցիկ բնակավայրերից մեկը:
Բարեփոխումներ կատարելով նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին՝

3. ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ

ԾՐԱԳԻՐ 1

ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԻ ՆՈՐՈԳՈՒՄ
Համայնքի ջրամատակարարման համակարգը կառուցվել է 1957թ-ին; Ջրագծի Երկարությունը կազմում է 4178մ:

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին տարիներին տնտեսական անկման և ֆինանսական աղության պատճառով շարքից դուրս են եկել մոտ 55 տարվա վաղեմություն ունեցող մաշված ջրագծերը: Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ վերանորոգման ենթակա ջրագծերն անցնում են քարքարոտ տարածքով ,որը շուտ-շուտ կոռոզիայի է ենթարկում ջրագծերը, մեծ վնաս հասցնում խողովակաշարին: 2010 և 2011թթ-ներին կատարվելէ խմելու ջրի ջրագծերի որոշ հատվածների վերանորոգում : Համայնքի հրատապ խնդիրներից է խմելու ջրի ներքին ցանցի 2500քմ և գյուղ մտնող 1000քմ ջրագծերի հիմնական վերանորոգումը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝
- Ապահովել համայնքը շուրջօրյա խմելու ջրով,

- Կանխել կեղտաջրերի ներթափանցումը ցանց և դրա հետևանքով առաջացող սուր վարակիչ հիվանդությունները;

Ծրագրի լուծման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝
-Կնքել պայմանագիր ,,Հազարամյակի մարտահրավեր,, հիմնադրամի հետ:
- Կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթեր
- հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող կապալառու շին. Կազմակերպությունը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական մոտավոր հաշվարկներով 3.5կմ երկարությամբ ջրագծի վերանորոգման և վերակառուցման աշխատանքների համար անհրաժեշտ է 30.0 մլն / երեսուն միլիոն /դրամ:

ԾՐԱԳԻՐ 2.
ՈՌՈԳՄԱՆ ԱՌՈՒՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ
ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ոռոգման առուները կառուցվել են 1947-ին,ջուրը բավարարում էր տվյալ ժամանակաշրջանում 180 ծուխ ունեցող գյուղին :2006թ-ին ,,Հազարամյակի մարտահրավեր ծրագրով վերանորոգվել է 400մ կիսախողովակ, սակայն հենց նույն տարում էլ Ազատ գետը այն քշել տարել է: Այժմ երբ գյուղն ունի 268 ծուխ և շատացել են տնամերձ հողամասերն ու պտղատու այգիները Ազատ գետի ջուրը բավարարում է միայն 60-70տոկոսով : Համայնքի հրատապ խնդիրներից է ոռոգման առուների 3կմ-անոց հատվածի կառուցումը՝ կիսախողովակների տեղադրումը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Ապահովել համայնքի վարչական տարածքում գտնվող տնամերձ հողամասերի և սեփականաշնորհված հողերի ոռոգումը:
- Բարձրացնել գյուղ նշանակության հողերի բերքատվությունը, ավելացնել գյուղ մթերքների արտադրությունը ,մասնավորապես
- Կարտոֆիլի, բանջար –բոստանային կուլտուրաների, խաղողի և պտղատու այգիների արտադրությունը:

Ծրագրի լուծման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ՝
-Կնքել պայմանագիր ,,Հազարամյակի մարտահրավեր,,հիմնադրամի հետ ծրագիրը ֆինանսավորելու և իրագործելու համար.
- 2013թ-ին իրականացնել ծրագրով նախատեսված շինարարական աշխատանքները:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

-Իրականացնելով այս ծրագիրը , համայնքի 41.9հա տնամերձերը և 112.59հա սեփականաշնորհված հողերը կապահովվեն ոռոգման ջրով:

-Կավելանա գյուղ. մթերքների արտադրությունը, խաղողի, պտղի և բանջար –բոստանային կուլտուրաների բերքատվությունը,որը կնպաստի գյուղացիների կենսամակարդակի բարձրացմանը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական հաշվարկներով այս ծրագրի իրականացման համար կպահանջվի ներդնել 30,0մլն /երեսուն միլիոն/ դրամ:

ԾՐԱԳԻՐ 3.

ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը կազմում է6կմ-ից ավելի, որից 1.0կմ-ը կենտրոնական ճանապարհն է: Մայրուղուց գյուղ մտնող ճանապարհն անմխիթար վիճակում է, կարիք ունի ասֆալտապատման:

Գյուղամիջյան բոլոր ճանապարհներն էլ խճապատման կարիք ունեն, անձրևային եղանակներին այդ ճանապարհները դառնում են անանցանելի: Սա է պատճառը, որ այդ ճանապարհները կարիք ունեն անհապաղ վերանորոգման:

Բնակչության դիմումներին ընդառաջելով պետք է ասֆալտապատել կամ խճապատել գյուղի բոլոր փողոցները , հատկապես՝ կենտրոնական ճանապարհը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- Հարց բարձրացնել ՀՀ կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու և իրագործելու համար:

-Ապահովել համայնքի կողմից պահանջվող ներդրումը:

-Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

-Կատարել ավազի, խճաքարի և կավի խառնուրդի փռում համայնքի փողոցներում, ապագայում նախատեսելով ասֆալտապատման աշխատանքները:

-Հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող կապալառու շին. կազմակերպությունը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Գյուղամիջյան 1.0կմ ճանապարհի ասֆալտապատման համար նախատեսվում է 40.0մլն /քառասուն միլիոն/ դրամ,իսկ 5կմ երկարությամբ ճանապարհների խճապատման համար 30.0մլն/երեսուն միլիոն/ դրամ:

ԾՐԱԳԻՐ 4

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ, ԿԱՀԱՎՈՐՈՒՄ

Մշակույթի տան ներսում է գտնվում գյուղապետարանը, գրադարանը: Հարկավոր է վերանորոգել մշակույթի տան տանիքը, դահլիճը, դռները պատուհանները ,մանրահատակը, բեմահարթակը; Հարկավոր է իրականացնել ներքին հարդարման աշխատանքներ ,գնել դահլիճի համար աթոռներ,որոնք ընդհանրապես բացակայում են:
Գրադարանին հատկացված սենյակը անմխիթար վիճակում է:
Չեն ապահովվում գրքերի պահպանման տարրական պայմանները:
Ունենք 5400 հատ գիրք,որոնց հարկավոր է փրկել կործանումից: Չկա ընթերցարան որտեղ հնարավոր լինի զբաղվել ընթերցանությամբ, ինչու չէ նաև կազմակերպել գրական,գրողների հիշատակին նվիրված երեկո - ներ,միջոցառումներ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ և ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակներն են
-Աշխուժացնել համայնքի մշակութային կյանքը
-Մշակույթի տան դահլիճը տրամադրել համայնքի ընդհանուրժողովների անցկացման, մշակույթային միջոցառումներ անցկացնելու համար:
Տոնական օրերին կազմակերպել մասսայական միջոցառումներ և երեկույթներ:
Տրամադրել խաղասենյակներ շախմատի, նարդու և այլ խաղերի համար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Մշակույթի տան հիմնանորոգման, կահավորման և անհրաժեշտ այլ ծախսերի համար մոտավոր հաշվարկներով անհրաժեշտ է 30.0մլն /երեսուն/ դրամ:

ԾՐԱԳԻՐ 5

Ս.ԱՄԻՐԽԱՆՅԱՆ Փ-ի 400մ ՀԱՏՎԱԾԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ

Համայնքի բոլոր փողոցները գազաֆիկացված են բացառությամբ Ս. Ամիրխանյան փ-ի 400մ հատվածի, որի գազաֆիկացման հարցը հարկավոր է լուծել մինչև 2016թ-ը:
Գյուղապետարանը տեղադրված է մշակույթի տան շենքում՝ երկրորդ հարկումի 5 սենյակներում: Այն գազաֆիկացվել է 2010թ-ին:
Դրանով իսկ բարեկեցիկ պայմաններ կստեղծվեն գյուղապետարանի աշխատակիցների , ավագանու անդամների գործունեության համար:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Կնքել պայմանագիր ՀՀ Արտաշատի ,,ԳԳՄ,,-ի հետ Ս.ԱՄԻՐԽԱՆՅԱՆ Փ-ի 400մ հատվածը գազիֆիկացնելու համար:
-Կազմել ծրագրի իրականացման նախագծա- նախահաշվային փաստաթղթերը:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ս.Ամիրխանյան-ի 400մ հատվածը գազիֆիկացնելու համար նախնական հաշվարկներով անհրաժեշտ է 2.0մլն /երկու միլիոն / դրամ:

ԾՐԱԳԻՐ 6
ԴԵՂՁՈՒՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

Դեղձուտի միջնակարգ դպրոցը տեղադրված է Հ. Շիրազի փ-ի 43 հասցեում: Դպրոցն ունի 119 աշակերտ և 20 ուսուցիչ: Վերջին տարիներին այն չի վերանորոգվել, որի պատճառով էլ գտնվում է անմխիթար վիճակում: Հարկավոր է փոխել մանրահատակը, դռները, վերանորոգել պատերը: Դպրոցը չունի նաև ջրագիծ և կոյուղագիծ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Հարց բարձրացնել ՀՀ Կառավարության առջև ծրագիրը ֆինանսավորելու և իրագործելու համար:
Նախնական հաշվարկներով ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է 40.0լն /քառասուն միլիոն / դրամ:

ԾՐԱԳԻՐ 7
ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Համայնքը մանկապարտեզ չունի: 2-6 տարեկան երեխաներին անհրաժեշտ է հաճախել մանկապարտեզ, որտեղ երեխաները զբաղվում են գիր ու գրականությամբ, երգ ու պարով, նկարչությամբ,տարբեր բնույթի խաղերով: Հաճախումների հետևանքով լայնանում է երեխաների մտահորի-

զոնը, զարգանում է էթիկան, ինտելեկտը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ

-Դիմել ՀՀ կառավարությանը և նրա միջնորդությամբ որևէ հիմնադրամի հետ կնքել պայմանագիր:

-կազմել ծրագրի իրականացման նախագծա-նախահաշվային փաստաթղթերը:

-Հայտարարել մրցույթ և որոշել աշխատանքներն իրականացնող կապալառու շին. կազմակերպությունը:

Ծրագրի իրագործման համար մոտավոր հաշվարկներով անհրաժեշտ է 30.0մլն /երեսուն միլիոն/ դրամ:

ԾՐԱԳԻՐ 8

ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

Քանի որ գյուղապետարանը տեղադրված է մշակույթի տանը,որտեղ չկան ժողովրդին սպասարկելու համար անհրաժեշտ մինիմալ պայմաններ,ապա պարզ է, որ անհրաժեշտ է կառուցել գյուղապետարանի շենք: Մոտավոր հաշվարկներով գյուղապետարանի շենքի կառուցման համար անհրաժեշտ է 30մլն /երեսուն միլիոն/ դրամ:

Կողմ - 7 Դեմ – 0 Ձեռնպահ - 0

Որոշումն ընդունված է:

Ավագանու անդամներ՝

Ա. Միրոյան կողմ

Բ. Ամիրխանյան կողմ

Հ. Հակոբյան կողմ

Յ. Մովսիսյան կողմ

Ա. Նազարյան կողմ

Հ. Շահբազյան կողմ

Ս. Շահբազյան կողմ

Դեղձուտ համայնքի ղեկավար Յ. Մուրադյան

Քարտուղար Կ. Գիշյան